ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«22» ապրիլի 2024թ.
N 33-01

Երևանի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին

Հարգելի պարոն Ավինյան

Համաձայն «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի՝ իրազեկում ենք Ձեզ, որ Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը 2024թ. մայիսի 1-ին կազմակերպում է խաղաղ երթ Աշխատանքի օրվա կապակցությամբ:

Երթը կմեկնարկի Ավետիք Իսահակյանի արձանի մոտից (մետրոյի «Երիտասարդական» կայարանի մոտ)՝ ժամը 12:30-ին, այնուհետև միանալով Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի երթին, կշարունակվի Աբովյան փողոցով մինչև Հանրապետության Հրապարակ, կավարտվի մոտավոր 14:30-ին:

Երթի մասնակիցների սպասվող թիվը մոտ 500 է:

Երթի ժամանակ կօգտագործվեն բարձրախոս, դրոշներ և պաստառներ՝ «Մայիսի 1-ը՝ Աշխատանքի օր», «Սոցիալականը՝ նյութականից առաջ», «Մարդը գերագույն արժեք է», «Հարկային արդարությունը անհրաժեշտություն է», «Հանրային ծառայողներին արժանապատիվ աշխատավարձ», «Մեզ անհրաժեշտ է սոցիալական գործընկերություն», «Մենք ուզում ենք առողջապահական ապահովագրության արդար համակարգ» և այլ կարգախոսներով:

Կից ներկայացնում ենք պետական ռեգիստրում ճյուղային հանրապետական միության գրանցման վկայականի, միության նախագահի անձնագրի պատճենները և ճյուղային հանրապետական միության նախագահության որոշումը երթն անցկացնելու մասին:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝
Հայաստանի պետհիմնարկների,
ՏԻՄ-երի աշխատողների
նախագահ՝ հաստատված է էլ. ստորագրությամբ **Անահիտ Ասատրյան**

Հասցե՝ 0010, ք. Երևան
Վ. Սարգսյան 26/3, 501 ս.

Address: 26/3 V. Sargsyan st,
Office 501, Yerevan, 0010

Адрес: 0010, г. Ереван
ул. В. Саргсяна 26/3, офис 501

Tel: +37410580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut